# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի
## ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 65-Լ

«09» հունիսի 2025թ. ք. Էջմիածին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 64-րդ հոդվածի 2-րդ մասի և 65-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդի կողմից 2025 թվականի հունիսի 6-ին ներկայացված ավագանու արտահերթ նիստ անցկացնելու նախաձեռնությունը.

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2025 թվականի հունիսի 9-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | [signature] | | | 13. Աղասի Բաղդասարյան | [signature] | | |
| 2. Էդվարդ Ափոյան | [signature] | | | 14. Լևոն Խաչատրյան | [signature] | | |
| 3. Նաիրա Բաւենցյան | [signature] | | | 15. Սևակ Խաչատրյան | [signature] | | |
| 4. Գևորգ Ղազարյան | [signature] | | | 16. Վահրամ Ղարիբջանյան | [signature] | | |
| 5. Լիլիթ Միրզախանյան | [signature] | | | 17. Նաիրա Գրիգորյան | [signature] | | |
| 6. Ներսես Մելիքյան | [signature] | | | 18. Կարեն Գևորգյան | [signature] | | |
| 7. Վարդան Գրիգորյան | [signature] | | | 19. Նորայր Օհանյան | | | [signature] |
| 8. Կարեն Մովսիսյան | [signature] | | | 20. Էմմա Պատուրյան | [signature] | | |
| 9. Գոհար Նիկողոսյան | [signature] | | | 21. Էդգար Թամազյան | [signature] | | |
| 10. Վահան Հախվերդյան | [signature] | | | 22. Արմեն [illegible] | [signature] | | |
| 11. Հրաչյա Ավետիսյան | [signature] | | | 23. Քրիստինե Հակոբյան | [signature] | | |
| 12. Աննա Կիրակոսյան | [signature] | | | 24. Կարինե Միքայելյան | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*Վաղարշապատ համայնքի ավագանու*
*Յոթերորդ նստաշրջանի*
*2025 թվականի հունիսի 09-ի*
*արտահերթ նիստի թիվ 65-Լ որոշման*

# ՕՐԱԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 9 «ԱԻԴԱ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 66-Ն

«09» հունիսի 2025թ. ք.Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 9 «ԱԻԴԱ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, 64-րդ հոդվածի 2-րդ մասի, 65-րդ հոդվածի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետի զեկուցագիրը առ այն, որ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ջվարթնոց թաղամասում 2-6 տարեկան նախադպրոցական տարիքի երեխաների ճնշող մեծամասնությունը զրկված են մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից, քանի որ գործող մանզապարտեզները գտնվում են բավականին հեռու և առաջանում է փոխադրման խնդիրներ, ավելին՝ գործող մանկապարտեզներում արդեն իսկ հերթագրված 141 երեխաներից միայն 90-ն է ընդունվելու մանկապարտեզ, որովհետև 2024-2025թթ. ուստարում մանկապարտեզն ավարտելու են 90 երեխաներ, ինչպես նաև կրտսեր առաջին խմբի տարիքի /2-3 տարեկան/ երեխաների ճնշող մեծամասնությունը մանկապարտեզ չի հաճախում այդ տարիքային խմբերի բացակայության պատճառով, Ջվարթնոց թաղամասում նոր մանկապատեզ կառուցելու/բացելու անհրաժեշտություն է առաջացել:

Հիմք ընդունելով վերագրյալը և հաշվի առնելով ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդի կողմից ներկայացված առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վաղարշապատ համայնքի անունից՝ ստեղծել Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 9 «Աիդա» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 9 «Աիդա» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:
3. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 9 «Աիդա» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2025թ. աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | [signature] | | | 13. Աղասի Բաղդասարյան | [signature] | | |
| 2. Էդվարդ Ափոյան | [signature] | | | 14. Լևոն Խաչատրյան | [signature] | | |
| 3. Նաիրա Բասենցյան | [signature] | | | 15. Մեսակ Խաչատրյան | [signature] | | |

4. Գևորգ Ղազարյան ______ ______ ______

5. Լիլիթ Միրզախանյան ______ ______ ______

6. Ներսես Մելիքյան ______ ______ ______

7. Վարդան Գրիգորյան ______ ______ ______

8. Կարեն Մովսիսյան ______ ______ ______

9. Գոհար Նիկողոսյան ______ ______ ______

10. Վահան Հախվերդյան ______ ______ ______

11. Հրայր Ավետիսյան ______ ______ ______

12. Աննա Կիրակոսյան ______ ______ ______

16. Վահրամ Ղարիբջանյան ______ ______ ______

17. Նաիրա Գրիգորյան ______ ______ ______

18. Կարեն Գևորգյան ______ ______ ______

19. Նորայր Օհանյան ______ ______ ______

20. Էմմա Պատուրյան ______ ______ ______

21. Էդգար Թամազյան ______ ______ ______

22. Արմեն Դավթյան ______ ______ ______

23. Քրիստինե Հակոբյան ______ ______ ______

24. Կարինե Միքայելյան ______ ______ ______

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կրթ. բաժնի պետ
Լ. Հակոբյանին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

Կրթության և մշակույթի բաժնի աշխատակիցների պարբերաբար դիտարկումների և վերլուծությունների արդյունքում հայտնում ենք, որ համայնքի Զվարթնոց թաղամասում 2-6 տարեկան նախադպրոցական տարիքի երեխաների ճնշող մեծամասնությունը զրկված է մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից: Ճիշտ է, թաղամասում գործում է երկու մանկապարտեզ, բայց դրանք իրենց տեղակայման դիրքով ավելի հարմար են բազմաբնակարան շենքերի երեխաների համար, իսկ առանձնատներով փողոցների երեխաների համար բավականին հեռու են, փոխադրման խնդիրներ են առաջ գալիս: Միաժամանակ հայտնում ենք, որ այդ թաղամասերում ապրող եզդիական համայնքի երեխաները նույնպես չեն կարողանում հաճախել մանկապարտեզ հեռավորության պատճառով: Այս պահին գործող երկու մանկապարտեզներում միասին հերթագրված է 141 երեխա, սակայն նրանցից միայն 90-ն է ընդունվելու մանկապարտեզ, որովհետև 2024-2025 ուստարում մանկապարտեզն ավարտելու են 90 երեխաներ: Տեղին է նշել, որ կրտսեր առաջին խմբի տարիքի /2-3 տարեկան/ երեխաների ճնշող մեծամասնությունը մանկապարտեզ չի հաճախում այդ տարիքային խմբերի բացակայության պատճառով: Հաշվի առնելով վերոգրյալ հանգամանքները՝ առաջարկում ենք դիտարկել Զվարթնոց թաղամասի այդ հատվածում նոր մանկապատեզ կառուցելու/բացելու հնարավորությունը, որով հնարավորություն կընձեռվի այդ տարածաշրջանի երեխաներին մատուցել նախադպրոցական կրթական ծառայություն, իսկ գործող մանկապարտեզներում՝ բեռնաթափել խմբերն ու նախադպրոցական կրթության մեջ ներգրավել 2-3 տարեկան երեխաներին:

Հարգանքով՝

Կրթության և մշակույթի բաժնի պետ՝ Լ. Հակոբյան

05/06/2025

Կազմված է 09.06. 2025թ.
Բաղկացած է 9 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ
09 ՀՈՒՆԻՍԻ 2025Թ.
ԹԻՎ 66-Լ ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Կ.Տ.
«——»—————— 20 թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
————————————ԿՈՂՄԻՑ
«_____» ____________2025 թ.

գրանցման համարը՝ ____________

ՀՎՀՀ՝ __________

աշխատակից՝
________________ ________________

«——»—————— 20 թ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 9 «ԱԻԴԱ»

ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2025թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 9 «Աիդա» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական ծառայություններ:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է ՀՀ, Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Մ. Մանուշյան 4/5:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 9 «Աիդա» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն».

2) հայերեն կրճատ՝ Թիվ 9 «Աիդա» մսուր- մանկապարտեզ ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ Детский сад- ясли №9 "Аида" общинная некоммерческая организация мэрии города Вагаршапата.

4) ռուսերեն կրճատ՝ Детский сад- ясли №9 "Аида" ОНО .

5) անգլերեն լրիվ՝ "Aida" №9 Kindergarten and Nursery community non-profit organization of Vagharshapat Municipality.

6) անգլերեն կրճատ՝ "Aida" №9 Kindergarten and Nursery CNPO :

6. Հաստատությունն ունի Վաղարշապատ համայնքի զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունը կարող է ունենալ մասնաճյուղ:

8.Հաստատությունն ունի պաշտոնական կայք (https://docs.ejmiatsin.am/Pages/KinderGarten/List.aspx), որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

9. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

10. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

11. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

12. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

13. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

14. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

15. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

16. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողություններին և հմտություններին ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

17. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

18. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

19. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով ՀՀ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

20. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) մասնագիտական վերապատրաստումների և խորհրդատվությունների, ծնողական կրթությանը միտված դասընթացների և ծրագրերի իրականացում.

3) ճկուն ռեժիմով սանին սպասարկելու ծառայություններ.

4) սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք.

5)սաների կազմակերպված տրանսպորտային փոխադրումներ.

## 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

21. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) և ուսումնական նյութերին համապատասխան:

22. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և նպատակաուղղված են յուրաքանչյուր սանի գիտելիքի, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը:

23. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

24. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ ծնողի /սանի օրինական ներկայացուցչի/ դիմումի, հաստատության ու ծնողի /սանի օրինական ներկայացուցչի/ միջև կնքված պայմանագրի հիման վրա:

25. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից և ավարտվում է օգոստոսի 31-ին: Տարիքային խմբերում սաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

27. Տարիքային խմբերի ձևավորումը և սաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

28. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

29. Նախադպրոցական ուսումնական հաստատությունն իր տեսակով մսուր-մանկապարտեզ է՝ 2-6 տարեկանների ընդգրկմամբ:

30. Հաստատության աշխատանքային ռեժիմը, տարիքային խմբերի թիվը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում լիազորված պետական մարմնի որոշմամբ՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

31. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

32. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

33. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ և համաճարակային միջոցառումների իրականացման, հիգիենիկ նորմատիվների պահպանման և սննդի նորմերի համար:

34. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

## 4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

35. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, լրացուցիչ կրթական ծառայության մանկավարժը և այլ մանկավարժական աշխատողներ:

36. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

37. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

38. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

39. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների անվանացանկին և պաշտոնների նկարագրին:

40. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

## 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

41. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական կառավարման կամ տարածքային կառավարման լիազոր մարմինը, տնօրենը՝ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրության համապատասխան:

42. Հաստատության հիմնադրի լիազորությունները սահմանված են «Նախադպրոցական կրթության մասին» և «տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

43. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

44. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և պաշտոնի նկարագրով իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

45.Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ հաստիքի բացակայության դեպքում՝ բարձրագույն կրթություն և 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

46. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական և ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է օգոստոսի 20-ից 30-ը:

48. Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով:

49. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր *մանկավարժական աշխատողները:*

50. Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է հաստատության տնօրենը, որն ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է:

51. Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է մանկավարժական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ ընտրված մշտական քարտուղարը, որի բացակայության դեպքում տվյալ նիստն արձանագրելու համար ընտրվում է նոր քարտուղար: Քարտուղարը պատասխանատու է մանկավարժական խորհրդի արձանագրությունների պատշաճ կազմման համար: Նիստի արձանագրությունը կազմվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում և ստորագրվում խորհրդի նախագահի ու քարտուղարի կողմից: Մանկավարժական խորհրդի նիստը հնարավորության կամ անհրաժեշտության դեպքում կարող է ձայնագրվել:

52. Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝

1) տնօրենի նախաձեռնությամբ.

2) մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.

3) լիազորված մարմնի նախաձեռնությամբ:

53. Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են:

54. Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ:

55. Հաստատության տնօրենը մանկավարժական խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ մանկավարժական աշխատողներին գրավոր ծանուցմամբ (բացառությամբ արտահերթ նիստերի) տեղեկացնում է մանկավարժական խորհրդի նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին:

56. Մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

57. Մանկավարժական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

58. Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

59. Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:

60. Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝

1) հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի.

2) օրվա կանոնակարգի և պարապմունքների բաշխման ցանկի, օգտագործվող ծրագրամեթոդական գրականության.

3) ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման տարբերակների.

4) սաների տարիքային խմբերի համակազմի վերաբերյալ և ներկայացնում տնօրենի հաստատմանը:

61. Հաստատության ծնողական խորհուրդը կազմավորվում է տարիքային խմբերի ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

62. Հաստատության ծնողական խորհրդի նախագահը խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ խորհրդի անդամներին պատշաճ ծանուցմամբ տեղեկացնում է նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին: Ծնողական խորհրդի որոշմամբ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ: Ծնողական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր:

63. Ծնողական խորհուրդների նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ:

64. Ծնողական խորհուրդների յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

65. Տարիքային խմբերի ծնողական խորհուրդների նիստերին մասնակցում են դաստիարակները, իսկ հաստատության ծնողական խորհրդի նիստերին՝ տնօրենը:

66. Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն հաստատության ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են ժողովներ՝ առնվազն չորս անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդների և մանկավարժական աշխատողների նախաձեռնությամբ կարող են հրավիրվել արտահերթ ծնողական ժողովներ:

67. Հաստատության ծնողական խորհուրդը՝

1) մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սաների առօրյայի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ.

2) աջակցում է հաստատությանը՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում.

3) լսում է տնօրենի հաղորդումը հաստատության գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները.

4) ամրապնդում է հաստատության և ծնողների միջև կապերը, մանկավարժական աշխատողների հետ ձևավորում և ծնողներին է ներկայացնում սաների դաստիարակության նկատմամբ միասնական պահանջներ.

5) մասնակցում է ծնողազուրկ և սոցիալապես անապահով սաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին.

6) ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը հաստատությունում.

7) ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ.

8) ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվությանը.

9) համագործակցում է հաստատության մանկավարժական և այլ խորհուրդների հետ:

## 6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

68. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

69. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

70. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

71. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

72. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

73. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

74. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

75. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

76. Պետական հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

77. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետական հաստատությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես հաստատությանն իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան հաստատությանը փոխանցելու համար:

78. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

79. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

80. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

81. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

82. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

83. Պետական կամ համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

84. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

85. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

86. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնադրումը, վերակազմակերպումը և լուծարումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի
ավագանու 09.06.2025թ.
թիվ 66-Է որոշմամբ

**2025թ. համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 9 <<Աիդա>> մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

1. Աշխատակիցների քանակը 21

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Հաստիքը | միավոր | դրույքաչափ | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 255000 | 255000 |
| 2 | Տնօրենի տեղակալ ուսումնական գծով՝ մեթոդիստ | 1 | 205000 | 205000 |
| 3 | Գլխավոր հաշվապահ | 1 | 205000 | 205000 |
| 4 | Դաստիարակ | 3.51 | 151000 | 453000 |
| 4 | Կրտսեր 1-ին խմբի դաստիարակ | 1.4 | 181000 | 181000 |
| 5 | Հերթապահ դաստիարակ | 0.59 | 151000 | 89090 |
| 6 | Հատուկ մանկավարժ | 1 | 159000 | 159000 |
| 7 | Երաժշտության դաստիարակ | 1 | 134000 | 134000 |
| 8 | Բուժքույր | 1 | 115000 | 115000 |
| 9 | Տնտեսվար | 1 | 115000 | 115000 |
| 10 | Խոհարար | 1 | 115000 | 115000 |
| 11 | Խոհարարի օգնական | 1 | 115000 | 115000 |
| 12 | Կրտսեր 1-ին խմբի դաստիարակի օգնական | 1.3 | 149000 | 149000 |
| 13 | Դաստիարակի օգնական | 3 | 115000 | 345000 |
| 14 | Դռնապան, հավաքարար | 1 | 110000 | 110000 |
| 15 | Պահակ | 2 | 110000 | 220000 |
| Ընդամենը | | 15.59 | | 2 965 090 |

Դաստիարակների դրույքաչափը սահմանված է << 1.17>>՝ համաձայն ՀՀ կառավարության 15 հուլիսի 2021 թվականի N 1169-Ն որոշմամբ և 29 սեպտեմբերի 2022 թվականի N 1485-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ [illegible] ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 67-Ա

«09» հունիսի 2025թ. ք. Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, 64-րդ հոդվածի 2-րդ մասի և 65-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով 29.04.2021թ. ՀՀ կառավարության թիվ 698-Ն հրամանի 39-րդ մասի 1-ին կետի 1-ին ենթակետը և ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդի կողմից ներկայացված առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի 26-րդ փողոցի թիվ 2/2 հասցեում գտնվող 0.0075 հա մակերեսով հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 04-081-0064-0037/, որպես քաղաքացու անվամբ հաշվառված իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր չունեցող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել Վաղարշապատ համայնքի սեփականությունը:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/ՀԱզգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/ՀԱզգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | | | | 13. Աղասի Բաղդասարյան | | | |
| 2. Էդվարդ Ափոյան | | | | 14. Լևոն Խաչատրյան | | | |
| 3. Նաիրա Բասենցյան | | | | 15. Սևակ Խաչատրյան | | | |
| 4. Գևորգ Ղազարյան | | | | 16. Վահրամ Ղարիբջանյան | | | |
| 5. Լիլիթ Միրզախանյան | | | | 17. Նաիրա Գրիգորյան | | | |
| 6. Ներսես Մելիքյան | | | | 18. Կարեն Գևորգյան | | | |

7. Վարդան Գրիգորյան

8. Կարեն Մովսիսյան

9. Գոհար Նիկողոսյան

10. Վահան Հախվերդյան

11. Հրայա Ավետիսյան

12. Աննա Կիրակոսյան

19. Նորայր Օհանյան

20. Էմմա Պատուրյան

21. Էդգար Թամազյան

22. Արմեն Դավթյան

23. Քրիստինե Հակոբյան

24. Կարինե Միքայելյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

23/04/2025թ.
N ՄՏ-23042025-04-1038
գաղտնաբառ՝ B8V58WQSVLKM

*Դիմող՝*

*ՀՌԻՓՍԻՄԵ ԱՐՍԵՆՅԱՆ ԿԻՐԱԿՈՍԻ*

**Ի պատասխան Ձեր 21/04/2025-3-0859 դիմումի** հայտնում ենք, որ համաձայն կադաստրային քարտեզի տվյալների՝ ներկայացված կոորդինատներով հողամասն իր մեջ ներառում է 0064-0037 ծածկագրով հողամասը , որն ըստ կառավարության որոշման կից քարտեզի համապատասխանում է քաղաքացու սեփականության բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր: Համաձայն էլեկտրոնային արխիվի որոնման տվյալների՝ 04-002-0064-0037 ծածկագրով գործող գրանցված, գրանցված անշարժ գույք չի հայտնաբերվել:

*Տեղեկանքը կազմվել է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի* ***Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր*** *ՍԻՐԱՐՓԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆի կողմից*

*Սույն տեղեկանքը հաստատված է էլեկտրոնային եղանակով: տեղեկանքը կազմող պաշտոնատար անձի կողմից

# Հասցե տրամադրելու մասին որոշում (որոշման քաղվածք)

## ՔԱՂՎԱԾՔ

*Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին*

| Հ.Հ. | Դիմորդ | Տրամադրվող հասցեն | Ծածկագիր | Ճարփխ-կոդ |
|---|---|---|---|---|
| 1 | Գույքի սեփականատեր հանդիսանում է համայնքը | Վաղարշապատ, Ոսկեհատ, 26-րդ փողոց, 2/2 հողամաս | 0402216XHJKS | |

PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT




PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT

PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 68-Ա

«09» հունիսի 2025թ. ք. Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, 64-րդ հոդվածի 2-րդ մասի և 65-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով 29.04.2021թ. ՀՀ կառավարության թիվ 698-Ն հրամանի 39-րդ մասի 1-ին կետի 1-ին ենթակետը և ի ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդի կողմից ներկայացված առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 115/3 հասցեում գտնվող 0.0034 հա մակերեսով հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0035- /, որպես քաղաքացու անվամբ հաշվառված իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր չունեցող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել Վաղարշապատ համայնքի սեփականությունը:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/ՀԱզգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/ՀԱզգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Արսեն Պետրոսյան | [signature] | | | 13. Արաքսի Բաղդասարյան | [signature] | | |
| 2. Էդվարդ Ափոյան | [signature] | | | 14. Լևոն Խաչատրյան | [signature] | | |
| 3. Նաիրա Բաանեցյան | [signature] | | | 15. Սնակ Խաչատրյան | [signature] | | |
| 4. Գևորգ Ղազարյան | [signature] | | | 16. Վահրամ Ղարիբջանյան | [signature] | | |
| 5. Լիլիթ Միրզախանյան | [signature] | | | 17. Նաիրա Գրիգորյան | [signature] | | |
| 6. Ներսես Մելիքյան | [signature] | | | 18. Կարեն Գևորգյան | [signature] | | |

7. Վարդան Գրիգորյան

8. Կարեն Մովսիսյան

9. Գոհար Նիկողոսյան

10. Վահան Հախվերդյան

11. Հրաչյա Ավետիսյան

12. Աննա Կիրակոսյան

19. Նորայր Օհանյան

20. Էմմա Պատուրյան

21. Էդգար Թամազյան

22. Արմեն Դավթյան

23. Քրիստինե Հակոբյան

24. Կարինե Միքայելյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

# ՈՐՈՇՈՒՄ

## ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ամսաթիվ՝ **02/05/2025**

Փաստաթղթի N՝ **Կ-02052025-04-0187**

գաղտնաբառ՝ **D7IPJ8LZKR4T**

Հասցեատեր՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԽԱՉԻԿԻ

Անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը

Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ Էջմիածնի թ.

*Ձեր N 28/04/2025-3-1668 դիմումի հիման վրա սկսված անշարժ գույքի նկատմամբ հայտագրված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքերով, քանի որ*

Ըստ կառավարության որոշմանը կից քարտեզի՝ համընկնում է քաղաքացու սեփականությանը

*Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր ՀՐԱՉ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ **

*Սույն որոշումը հաստատված է էլեկտրոնային եղանակով, որը ընդունվել է պաշտոնատար անձի կողմից.

[illegible]

| | |
|---|---|
| Սեփականատեր | |
| Վաղարշապատ համայնք | |

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Արմավիր Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին փ.

Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը

| | |
|---|---|
| Հաստատում եմ | |
| Համայնքի ղեկավար | |
| անուն, ազգանուն, ստորագրություն | |




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.0034 |
| Ծածկագիր | 04-002-0035 |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման համար |

Լրացուցիչ նշումներ

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Եզրագծային (շեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |

Մասշտաբ 1:1000

| | |
|---|---|
| Որակավորում ունեցող անձ | ՄԵՍՐՈՊ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ |
| Որակավորման վկայականի համարը | 006 |
| Ստորագրություն | |
| Իրավաբանական անձի անվանումը | ԱՁ «ՄԵՍՐՈՊ ՄԱՆՈՒԿՅԱՆ» |
| ՀՎՀՀ | 01U221947 |
| Ստորագրություն | |

| | | |
|---|---|---|
| ամիս ամսաթիվ | չափագրության | 14.10.2024թ |
| | հատակագծի կազմման | 10.02.2025թ |

Կ.Տ.

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 4449023.18 | 8439296.19 | |
| | | | 35.80 |
| 2 | 4449053.93 | 8439277.86 | |
| | | | 4.11 |
| 3 | 4449057.44 | 8439275.72 | |
| | | | 12.65 |
| 4 | 4449069.09 | 8439270.79 | |
| | | | 0.31 |
| 5 | 4449069.23 | 8439271.07 | |
| | | | 12.10 |
| 6 | 4449058.38 | 8439276.41 | |
| | | | 0.26 |
| 7 | 4449058.25 | 8439276.18 | |
| | | | 2.65 |
| 8 | 4449056.10 | 8439277.72 | |
| | | | 2.71 |
| 9 | 4449053.77 | 8439279.10 | |
| | | | 0.10 |
| 10 | 4449053.82 | 8439279.19 | |
| | | | 4.91 |
| 11 | 4449049.53 | 8439281.59 | |
| | | | 1.16 |
| 12 | 4449048.51 | 8439282.16 | |
| | | | 0.85 |
| 13 | 4449047.78 | 8439282.57 | |
| | | | 6.53 |
| 14 | 4449042.07 | 8439285.76 | |
| | | | 21.42 |
| 15 | 4449023.38 | 8439296.21 | |
| | | | 1.50 |
| 16 | 4449024.13 | 8439297.52 | |
| | | | 1.64 |
| 1 | 4449023.18 | 8439296.19 | |

| | |
|---|---|
| Որակավորում ունեցող անձ | ՄՇԵՂ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ |
| Որակավորման վկայականի համարը | |
| Ստորագրություն | |
| Իրավաբանական անձի անվանումը | «[illegible]» |
| ՀՎՀՀ | 01Ա271947 |
| Ստորագրություն | |

| | | |
|---|---|---|
| Ամիս ամսաթիվ | չափագրության | 14.10. 2024թ |
| | հատակագծի կազմման | 10.02.2025թ |

Կ.Տ.

# Հասցե տրամադրելու մասին որոշում (որոշման քաղվածք)

**ՔԱՂՎԱԾՔ**

*Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին*

| Հ.Հ. | Դիմող | Տրամադրվող հասցեն | Ծածկագիր | Շտրիխ-կոդ |
|---|---|---|---|---|
| 1 | [illegible] | [illegible] | [illegible] | |

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 69-Ա

«09» հունիսի 2025թ. ք. Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

